

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր 8 Մէճ.
» Գաւառաց » 40 Մէճ.
վեցամսեայ Կ. Պոլսոյ » 4 Մէճ.
» Գաւառաց » 5 Մէճ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրյ.
Մանուկն առողջ մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ օտարկութիւն կըլլայ:



Լ Ր Ա Պ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 14 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 22 մայիս.

Պ. Կուլառ ետ քաղաքի նախարար-
ութիւնը հետեւեալ կերպիւ կազմուեցաւ.
Սիւսէ զօրապետ՝ Նախարար զինուորա-
կան գործոց և փոխ նախարար.
Տեքազի դուքս՝ արտաքին գործոց.
Ֆուրթու Ներքին գործոց.
Սայն՝ Կրօնական.
Թէլան՝ Դատաստանական գործոց.
Քայեօ՝ Հասարակային շինութեանց.
Կրիվար՝ առևտրական գործոց.
Քիւմոն՝ Հասարակաց կրթութեան.
Մօնթէնեաք՝ Ժողովին գործոց.
Այս նախարարութեան անդամոց մեծ
մասն աջակողմեան են կամ աջակողմեան
կեդրոնական:

Փարիզ 22 մայիս.

Պ. Տեքազի և Օտիֆէր—Բաքիէի ըն-
կերակցութեամբ կազմուի ուղղուած նա-
խարարութիւնը Հայոց հետ:

Մաք—Մաքսն մարաշական մտադիր է՝
մայիս 24-ին առաջ օրը մը չընելու
Մէթիքիէի իշխանն և Պ. Մօնթէնեաք
մենամարտութեան ելան և երկուքն ալ
թիւթի կերպիւ վերադարձան:

Վիեննա 22 մայիս.

Դաւանական երրորդ օրէնքը կայսեր
փաւերացումն ստացաւ:

Եւն 22 մայիս.

Ռուսիոյ և Գերմանիոյ կայսրերը մեր
քաղաքը կ'ապաստեն:

Գաշիւր 21 մայիս.

Եգիպտական կառավարութիւնը ծա-
նոց թէ յունիստէն հոկտեմբեր վճարելի
պարտատուներն հիմապահել կրնայ զեդ-
չել տարին 12 0/0-ի հաւուով:

Սան Ֆրանչիսկո 20 մայիս.

Պ. Ռօշֆոր մեր քաղաքը հասաւ:
Կըսուի թէ Պ. Ռօշֆոր Սմերիկայի զԷԼ-
խաւոր քաղաքները ստորադրուի ճառասո-
սութիւնն պիտի ընէ, և ետքն ալ Նիւ-
Եորքէն ուղղակի Պրիւսիոյ պիտի երթայ:

Փարիզ 23 մայիս.

Նոր նախարարութիւնն հասկնալ զին-
ւորական է և կեդրոնական աջակողմեան:
Մաքերն յաջող և կիրք պատճառող
ամեն խնդրոց վճարանութիւնն յառա-
ջիկայ աշան թողուեցաւ:

Աթէնք 22 մայիս.

Պետութեան վարչական պաշտօնա-
տարաց մէջ մեծ փոփոխութիւնը կը ծա-
նուցուին:

Լորիովի հանքաց ընկերութեան վի-
ճակը քննելու պաշտօն ունեցող յանձնու-
թողութիւն սյուր իր տեղեկադիրը կառա-
վարութեան յանձնեց:

Փարիզ 23 մայիս.

Նոր նախարարութիւնը հին մեծա-
մասնութեանն պաշտպանութիւնն պիտի
զտնէ, սահմանադրական օրէնքները պի-
տի պատրաստէ և նախագահին իշխանու-
թեան ուրիշ անցնելուն խնդրը ժողո-
վին որոշանալ պիտի թողու:

Գերմանիոյ դեսպան Հօնէնրօնէի Բր-
վիս իշխանն այսօր իր գեսպանական վը-

կայադրերը Մաք—Մաքսն մարաշական
ներկայացուց:

Փարիզ 24 մայիս.

Պ. Թիէրէ յիշատակէր Գաւառին պատգա-
մաւորներն ընդունելու առթիւ՝ առեւտ-
խօսութիւն մ'ըրաւ և աղջային ժողովը
լուծուելու հրաւիրեց:

Օսմ. Բօնս. 48:50:

Պէրլին 23 մարտ.

Ռուսիոյ կայսրն երէկ Պրիւսիոյ մեկ-
նելով իրիկունը խմ հասաւ, և խիստ փա-
ռաւոր կերպիւ ընդունուեցաւ:

Լոնտոն 23 մայիս.

Շիլի՝ իշխանութիւնները այլ հրամա-
նատարութիւն տուին, և անոր դրամա-
կան հատուցում մ'ընելու համեցան:

Լոնտոն 23 մայիս.

Օսմ. Բօնս. 47 3/4
փոխ 1865 66 4/2
» 1869 55 13/16
» 1871 —
» 1872 83 3/4
Անգլ. Բօնս. 93 9/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ.

Վսեմ. Բեռաիւ պէյ՝ վերստին
գետականաց ներկայացուցիչ և առա-
ջին արարողապետ անուանեցաւ:

Կիրակի օրը Անգլիոյ թագուհւոյն
ճննդեան տարեդարձն ըլլալով Վեհ.
Սուլթանին առաջին քարտուղարն
և Բ. Գրան Ա. թարգման Վսեմ. Սա-
տուլլահ պէյ շնորհաւորութեան գը-
նացին Անգլիոյ դեսպանին, և մայ-
րաքաղաքիս նաւահանգստին բերա-
նքն սպասող Օսմ. քորվէթն ալ անգ-
ղիական դրօշակ քաշելով՝ ողջունել
թնդանութիւնը արձակեց:

Եգիպտոսէն հեռագրով լուր կու-
տան թէ խորվիլն արտաքին գործոց
նախարար Վսեմ. Նուպար փաշան
յատուկ պաշտօնով Եւրոպա ուղևո-
րել է:

Շաբաթ օրը Ղալաթիա Մուհա-
մէտի փողոցին մէջ յանդուգն ոճի մը
գործուեցաւ:

Պ. Նի.քօլիչ, Աւստրիական Լոյտի ըն-
կերութեան գլխաւոր գործակաւա-
րը, որ միանգամայն մայրաքաղաքիս
Աւստրո—Հունգարական գաղթական-
նութեան փոխանորդն էր, ժամը եր-
կու.քուկէսին միջոցները Լոյտի ընկե-
րութեան գործունէն գուրս ելնելով
զէպի Ղալաթիոյ մաքսատունը գնա-
ցած ժամանակ, խրատած մը գէմը
կենէ և աւորճանակ մը վրան սլա-
պելով կը փախչէ:

Պ. Նի.քօլիչ ստամբուլէն դարձուե-
լով կը վառուի կիլիսայ: Խալիքն կը վեր-
ջենէն Լոյտի գրատունը կը փոխադ-
րեն, և քանի մը բժիշկ կը կանչեն
պէտք եղած դարմանն ընելու: Ատըր-
ճանակին գնտալը Պ. Նի.քօլիչի աղի-
քը ծակելով՝ կրնակին ողնասկոն կոչ-
ուած ոսկրը խորտակել և անոր մէջ
թաղուել էր: Ուստի բժշկութիւնն

անհնար ըլլալով Պ. Նի.քօլիչ մեռաւ:
Խակ զարնոյ խրատութիւն վրայ ոստի-
կանութիւնը պէտք եղած տեղեկու-
թիւններն ստանալով, ետեւէն ինկած
է և փութոյ պնդութեամբ կը փըն-
տըռէ:

Կըսուի թէ ոճրագործը ժամա-
նակաւ Լոյտի ընկերութեան քով ծա-
ռայած, բայց անհաւատարմութեան
պատճառաւ ճանքուած ըլլալով, քա-
նի մ'անգամ Պ. Նի.քօլիչի գիմեր և
նորէն պաշտօնին ընդունուելը խնդ-
րել է, բայց Պ. Նի.քօլիչ մեծեր է
խնդրել, և այս պատճառաւ խրուա-
թըն ալ իս պահեր է:

Պ. Նի.քօլիչ ամենուն յարգն ու
համակրութիւնը դրաւ ընտիր անձ
մ'ըլլալով, իւր այս աղետալի մահը
մեծ կ'իկնէ պատճառեց մայրաքա-
ղաքիս եւրոպական գաղթականու-
թեան:

Մէքիէի Շէրիֆին եղբայր Շէրիֆ
Ալին փաշան ուրբաթէն շաբաթ լուս-
նայրու գիշերը վախճանեցաւ և շա-
բաթ օրը մեծ հանգիսիւ թաղուե-
ցաւ:

Գոնեայի գաւառական լրագրին
հրատարակած հաշուոյն նայելով, յիշ-
եալ գաւառին ոչխարաց տասանոր-
դի աւուրն այս տարի 6 միլիոն զըշ
հաղիւ պիտի բռնէ, մինչդեռ անց-
եալ տարի 12,624,346 զըշ բռնած էր:

Սամսի բնակիչներն իրենց արդի
կառավարիչ Բօսթաքի Ստօսիտէս
փաշայէն շատ գոհ ըլլալով արտաքին
գործոց նախարարութեան միւսթէ-
շար անուանելուն վրայ յուզուեցան, և
անմիջապէս աղերսադիր մ'ստորագ-
րելով ինն պատգամաւորներու հետ
Կ. Պօլսի զրկեցին Մեք—Եպարքոսին
մատուցանելու, որպէս զի Բօսթաքի
փաշան Սամսի կառավարիչ մնայ:

Առ. այժմ արտաքին գործոց նա-
խարարութեան Մէքիսպէի Ալի
Ֆիւսատ պէյը կը կատարէ Միւսթէ-
շարի պաշտօնը:

Իզմիրէն լուր կուտան թէ անց-
եալ հինգշաբթի 474 ուղտ 1442 սլաղ
ալիւր բեռեցած՝ ճանքայ հանուել
են դէպի Լանկաշիր:

Տխարպէքիլի կուսական ալ հե-
ռագիր դարկած է Բ. Գրան թէ մի-
շն հիմա 1500 քիլէ ցորեն զրկել է
դէպի Կեսարիա և Եօղլատ, ամեն
մէկ քիլէն 560 հօխայ ըլլալու պայ-
մանաւ: Մալաթիայէն մը 500,593 քա-
րաթ, այն է 4,094,760 հօխայ ցորեն
ճանքայ հանուել է:

Անցեալ հինգշաբթի օրուրէն ըս-
կեալ թերթ մը հրատարակիլ սկսաւ
մայրաքաղաքիս մէջ Լ'Օրիան Ֆինանսիէ
անունով երեք լեզուէ, Գաղղիերէն,
Տաճկերէն և Յունարէն, Պ. Տէլլա Ռօք-
քա խաղաղիւն տնօրէնութեամբ, և

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս դացած լրագրաց ճան ու-
ծալը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո-
լս, Չինիլի խան, Մաթթի գրասեն-
եակը:
Ճամբու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր:

ԴՐՄԱՆԵՐ

Անցեալ շաբթու Օսմ. քօնսուլտէն
քանի մ'անգամ իջաւ ելաւ, բայց
երէկուրէն ի վեր դարձեալ ելնել
սկսած է:

Այս ելնէիները որ Լոնտոնի և
Փարիզի Պօստաներէն ծագում կու-
տեն, այլ և այլ զրոյցներու պատ-
ճառ տուած են: Մէկ կողմէ կ'ըսուի
թէ Սատրք փաշային Եւրոպայի սե-
ղանաւորաց հետ ըրած դրամական
պայմանագրութիւններն ստորագրե-
ւելու կէտին դժուարութիւններ ծա-
ղեր են: Միւս կողմէն այս զրոյցը
սուտ հանելով հաստատողներ կան
թէ Օսմ. աղջային Պանքայի մը հա-
տաւորութիւնը ընցած գործ մ'է:
և Աւսթրո—Օթոման Պանքան ալ
սոյն նոր Պանքային հետ միացել է:
Խակ փոխառութեան գալով, կըսուի
թէ 40 միլիոն լիւրայի քօնսուլտէն պի-
տի հանուի 335-ն, հարկերն 3 տոկոս
սով. և թէ Գաղղիոյ, Անգլիոյ և Գեր-
մանիոյ ամենէն մեծ տունները խոս-
տացել են այս նոր փոխառութեան
բաժիններուն մեծ կալ մասը 285-ն առ-
նելու, և որպէս ալ են որ Օսմ. ան-
վճար պարտքերը գողցելու համար 8
միլիոն կանխիկ դրամ տան Օսմ. գան-
ձուն: Բայց քսողներ ալ կան թէ գան-
ձուն անվճար մնացած պարտքերը
ոչ թէ 8 միլիոն լիւրայով, այլ փոխա-
ռութեան բոլոր արդիւնքովը հաղիւ
կրնայ գողցուիլ: Ուստի աւելի հաւա-
նական կը համարեն այն լուրը թէ
փոխառութեան գումարն 80 միլիոն
Անգլ. լիւրա պիտի ըլլայ:

Բայց ստանք առ. այժմ զրոյց են,
դեռ պաշտօնական տեղեկութիւն
մը չկայ, և այս անստուգութիւնն
է որ միտքերը վարանման մէջ պա-
հելով Օսմ. քօնսուլտէնին յեղեղուկ
և ամեն հովէ տատանող վիճակ մը
կուտայ:

Յոյս կայ որ Սատրք փաշայի ը-
րած պայմանագրութեանց վրայ ման-
րաման և ստույգ տեղեկութիւններն
այսօր վաղը կը հասնին Փարիզէն, և
բոլոր անստուգութիւնները կը փա-
րատին:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԱՐ ՈՒՄՈՒՄԻԷ

13 մայիս	Երկուշաբթի իրիկուն	54.37
14 »	Երեքշաբթի առաւօտ	54.30
	Բացուեցաւ	54.22
	Կէս օր	

Կ. Պօլս 13 մայիս,	
Սօսիէթէ Ժէնէրայի բաժինը Անգլ. լիւր	7.10
« փոխանակութեան »	4.35
Կ. Պօլսոյ Պանքային »	5.
Քրէտի Ժէնէրայ »	40.10
Քրէտի Օսթրո—Թիւրք »	
Կրկնութեան գին հին	421.50
նոր »	96.50

Փոխ. 1863	»	347
» 1865	»	350
» 1869	»	290
» 1872	»	85
Փոխ. 1873		
Թրամուէյ	Օսմ. լիւր	5.60

Բայց ի՞նչ է հայրենի եկեղեցիէն օտարացեալ Հայուն վիճակը—Թէ որ Հայ կաթողիկոսութիւնը երկու ճշգրտած կը կռուի, կը հայհոյէ, կը նշովէ, ասուելութիւն կը չնչէ, Հասուն անունին վրայ երկու սպանդ յաջ ու ձախ կը թաւալին, տուն՝ բնակարան՝ շոգեհատ՝ սրճարան՝ փողոց՝ եկեղեցի՝ օրագրաց էջեր՝ Բարձրագոյն Դուռ՝ դետականատուն և մինչև Արքունիք աս անունը կը յիշեն և կը սովորին, կարելի՞ է ըսել թէ՛ այս Եպիսկոպոսը՝ այն վարդապետը՝ նա միաբանուելութիւնը՝ ուսումը կամ անդին մեծատունը կամ խառնազանճը եղան պատճառ և խռովելին ժողովուրդ մը՝ որ դառնուելի պէս հլու էր, ազունիի պէս միամիտ էր, կրնական պէս հաւատացեալ էր, վերջապէս ժողովրդեան պէս . . . Ժողովուրդ էր — Զէ՛, ոչ երբէք, Հասունը սկզբունք մ'էր։ Հոռմէական ըսկզբունքն էր անճառարեալ կամ մարմնացեալ։ Անոր համար ալ նոյն սկզբունքը օրինաւոր նախագահ զինք կ'անուանէր, վասն զի դպրոցի եւ անչառնչ երած էր արժուին վրայ իրել թէ սոցոսկած, և ժողովրդեան անհոգութեան համար կը տեսուէր . . . Թէ որ հանգարտ կենար և կամայ չարժէր, ո՞վ ձայն պիտի հանէր, բայց այդ սկզբունքը զագար չ'իւտեր, ուստի պէտք էր չարժէր և ամեն բան կործանէր . պէտք էր որ իր թոյնը թափեր ծածուկ կամ յայտնի ղենեակոյ Միսիթարեանց, Համագեաց ընկերութեան, Անտոնեանց միտքանութեան, Գլմառու միտքանութեան, Բարեգործական ընկերութեան, և մանաւանդ Հայաստանեայց հայրենի եկեղեցւոյն, եւ ուսմունքի և դիտութեան և աղքատութեան սկզբանց դէմ։ Այդ մարդը ոտեղծուած էր ճիշդ իր պաշտօնին համար, և ամեն կատարելութիւն ունէր ի ընտրեալ նոյն անկերելի արարելու համար՝ առաձիգ խղճմարտանք մը դիւրացուցեր էր իրեն աղքատին ժառանգութիւնը յախշտակել, հարուստին ժառանգակից և շողքըրթ ըլլալ, միամտին առջեւ սուրբ ձեւանար ազատամիտ մարդուն հետ փրկստիպ ըլլալ, բանասիրութիւն և զրոգարութիւն իրել սուր

և սրբաբանական, Տոն կատարող-
յէն մինչև Մեծամասնի, Սէտայէն մին-
չև . . . ի գրկէնէրը քէն եւ թոյն
լեցնելով սակոյ գնով ծախու առնե-
լով, մեծատոհմի և կարող մարդուն
քաղցր ակնարկել, աղքատին, տկա-
րին և առաքինութեան օտնհար ը-
լալ: Արծաթաթուղթեան յառաջա-
դէմ, այնչափ միամիտ չէր որ երե-
սաւն ողորմելի արծաթեան համար
իր տէրը ծախէր, այլ շատ սրամիտ,
իր Պիտի անուամբ միլիոններ վաստը-
կեցաւ:

Իր մտադրանքները հին և նոր
աշխարհը (1) տակն ու վրայ կընէին,
և իր ստորագրութիւնը և կնիքը
արեւելքի աղքատ հալածեալ և մար-
տիրոս կաթողիկոսութեան համար՝ Հա-
վանայի խեղճ սեւամորթ գերեզմա-
րինէն և քրտինքէն լուսնի կը շոր-
թէր: Այդ մարդը՝ որ իր ժողովուր-
դը կարհամարհէր, որ իր տէրութիւն-
նը կը պարտաւէր, որ օտարին կ'ըրծ-
նէր, որ յաջողութեան կը շնորհէր, վեր-
ջապէս օր մը մոռցաւ իր դերը, յա-
ջողութիւնը շրջաւայ իր աչքերը, ինք
որ կենդանեաց խորագէտն էր, որ
կը սողար և անշուշտ կը քալէր, ինք
որ կամայ և անձայն կը հծծէր և
թելթել կը սուլէր, ինք որ մահաբեր
հարուածն անդգայի կը թափէր եւ
քուն կը ձևանար, ինք որ սրաքանի
նայուածք ոչ երբէք չեշտակի՝ այլ
միշտ չեղ և քովընտի կողմէր, յան-
կարծ մոռցաւ իր բնութիւնը, առիւծ
ուղեց դառնալ, գիմարութեանց
իր ճակատը տուաւ և համարձակ ե-
րեցաւ ամենաւն յայտնի ինչ որ էր,
և խմացուց ինչ որ կողմէր:

Ահա մարդը որ իր աշակերտնե-
րը զինքը մեծ մարդ ըսին, Սրիտի-
դէս անուանեցին, Գրիտտի նման-
ցուցին. ինչ դարմանք, իր աշակերտ-
ները գիտեն թէ ինչ պատուական
ժողովուրդ մ'ունին, որ ոչ մեծու-
թեան, ոչ արդարութեան և ոչ սըր-
բութեան գաղափար ունի. գերեզմա-
նի ժողովուրդ՝ որ իր հակառակորդը նա-
խատելու համար (հուզութեամբ) իր
հետեւնէ կանուանէ. սընտքի ժողու-
վուրդ՝ որ գիմարցիին բերնէն Աւե-
տարան բառը լսած ժամանակը՝ «Մե-
ղի զրույցած էին որ այդ աւետարա-
նը բռնակցածն էր կարգայ» կընէ-
վերջապէս ժողովուրդ մը՝ որ իր լե-
զուն իր աղբութիւնը չգիտնալը և
զայն արհամարհելը իրեն պարծանք
կը համարի, և որ կրօնքը գիտնալ և
ճանչնալը իր քահանայից յանձնելով՝
նորա կրօնամիտութիւնը միայն իր
անձին կը սեփականէ: Դուք որ տե-
սաք այդ ժողովուրդը, կընեցէք մար-
դը որ առաջնորդ և գրօնակ է նո-
րաւունք իրեն վրայ այնչափ և շատ
զրուցեցինք:

Ինչ կողմէր, ո՞ւր կը գիմարէր այդ

(1) Իր մտադրանքներէն մին՝ Ներ-
սէս վարդապետ Ֆրանսիսկան 1830ին մի-
ջոցներն իր հրամանաւ և վկայագրաւ
Ալեքիլայի կողմերը երթալով, ի գործին
Քաւար կղզւոյն հարստութեան և սրու-
թեան բերանալիք նկարագրութիւնը կը-
նէր, և երբ յունկնդրաց մէկը, ինչ մու-
րաւը յարմար երկիր է եղեր այդ, վար-
դապետ, ըսաւ, պարտնաւորու և հարա-
ծական եղաւ: Ետքը Հատուկին ալ իր ա-
ջակցութեան խաղը խաղաց, ժողոված
հազար ճամբու ծախքին բաւական եղաւ
ընելով: Բայց Հատուկ սովորաբար միշտ
արամիտ՝ սպասեց յանգուտաւ դալովակ-
ղութեան տակ՝ չի տուաւ: Երբ վարդա-
պետը վախճանեցաւ Լոնտոն, և որովհե-
տեւ շատ ամառապետ մարդ էր և խնա-
յութեամբ կ'ստուգէր, ինք առաջին քայլն
ըրաւ, ամեն գիշերը՝ մտադրանքներ
իրաւունք, յաջողակութեան իրաւունք,
խնայութեան իրաւունք, առիւծի բա-
ժինն ըրաւ, բուն ժառանգող հաղիւ քա-
նի մը վերանք նետելով:

մարդը: Հռոմէական բացարձակ իշ-
խանութեան երեսփոխանն էր: Հը-
ռոմ կերթար, և ժողովուրդը ունե-
ցածովն ու չունեցածովը, նիւթակաւու-
վին ու բարոյականովը Հռոմից տա-
նէր, և երբ գիմարութիւնը դառաւ,
չյաջողեց, և իշխանութիւնը կորսն-
ցաւ, ինք որ «Ես առ ժողովուրդը
իմ ակրայիս զարկած եմ, ազէկ կը
ճանչեմ» կընէր, ինչ որ կրցաւ ըրաւ,
ինչ որ Հռոմ պէնք մնացեր էր գոր-
ծածեց: Բայց Հռոմայ հատու զէնքե-
րը ոչ կ'ունէին, ոչ և կ'աշխարհա-
յութիւնն է, ոչ բանադրանքն է, ոչ
նորա հերձուածող բառն է (1), այլ
պետութեանց երկաթէ և կրակէ զէն-
քերն են, առանց որոց օգնութեան
ոչ երբէք յաջողած են Հատին եկե-
ղեցւոյ գլուխներն իրենց իշխանու-
թիւնը տարածանել և ամրապնդել:
(2): ԾԵՐԵՆԵՑ

. . . Խմբագիր . . .

Կընդդէմ որ հետեւալ աղղը պատ-
ւական լրագրողը միջոցաւ հրատարակել
բարեհաճիք: Միամ աղղարար
12 մայիս 1874 Երեւն քհնջ Սերէնեան

Ե.Օ.Դ

Գումարաւոր Մայր եկեղեցւոյ Թագ-
խորհրդի չորս անդամը համաձայնական
ընտրութիւնը թէպէտ այսօր պիտի կա-
տարուէր, բայց ընտրողական ժողովը՝ ու
մանց գիտադրութիւնը օրինաւոր համա-
րելով, և նկատելով որ քուէարկութիւնը
կատարուելի և արդիւն է, ներկայ աղղա-
րարութեան կը յայտարարէ որ յիշեալ
քուէարկութիւնը պիտի կատարուի յա-
ռաժիկայ կիրակի, մայիս 19, առաւօտուն
ժամը 12-3 տաւգ դուռի թիւ մէջ, և եւ
ժամը ձեռք 3 ին քուէհամարի գործողու-
թիւնը պիտի սկսի:

Քուէարկութիւնը անձամբ պիտի կա-
տարուի, բայց ստիպողական պատճառ-
ունեցողներն կրնան իրենց քուէն առ
ընտրողական ժողովը նախադաշն զրկել
նամակաւ, նամակին վրայ անուն և մակա-
նուն, արձեւել, ժողովը անուն և տան
թիւը նշանակելով:

Ընտրողը այս անգամ ներքոյ նըշա-
նակեալ ընտրելեաց ցանկին մէջէն միայն
ձին կրնան քուէ տալ և այս ցանկին դուրս
անձանց արտած քուէներն անընդունե-
լի պիտի համարուին:

Ծրարով եկած նամակներ չեն ընդուն-
ւիր:

(1) Ինչ որ գրութիւն կ'ըլլէ նիւս Հռոմ-
ադաւան գրիչներէ, Գաթրճեանէն մինչև
Պիտի Թ, ամենքը՝ Հայաստանեայց եկե-
ղեցին չէին: Հերձուածող և զշակուա-
սունեան Նոր—Հերձուածող կ'անուա-
նեն: Պապին վերջի կողմէր (6 յունիս
1875) Քիւրէիան Յովհաննէս Պատրիար-
քին վրայ խօսելով կ'ըսէ. «Իշխանութեան
հասնելն և եւ, հայածիք ուղղափառ-
ները կ'սին խոտմամբ և կ'սին մը ըս-
տաւանալօր պաշտօնէց և ջանաց իր
«Իշխանութեան տակ ձգել: Արեւի յա-
ջողքը, ուղղափառը նորէն նոյն շատ
«Ինքն իմանալը կը դառնային որուն մէջ
«ասիկ քառասուններու տարի յառաջ կը
«հեծնէին իրենց համաձայն չին—հերձուա-
«ծողաց իշխանութեան տակ նաւաւած-
«ժամանակներն»: Նոյն կողմէր կը զա-
տապարտէ: Գանձը, որ Պետրոսի վրայ
հաստատուած կաթողիկէ եկեղեցիին կը
հեւանան. «Այս հիմն զԵկեղեցին բա-
«ժանդակելը, ալ Աստուածային և Կա-
«թողիկէ Եկեղեցին չեն պահէր, հասար-
«կը ջանան «մարդկային եկեղեցի» մը շի-
«նել, որ աղղայնութիւն ըստած մարդ-
«կային կապերով միայն կապուած ըլլա-
«լուն, ոչ Երանելոյն Պետրոսի ամբողջ
«սերտիւ յարած քահանայից գործը կը
«միաւորի, ոչ անոր պնդութեամբ կը զո-
«րանայ»:

(2) Ունան իր վերջի Ռեզիւ տը Տէօ
Մօնտի մէջ գրած «Կրօնական խնդիր»
ըսած յօդուածոյն մէջ պատմական ճշ-
մարտութեամբ կ'արտացոլանէ մեր ըսած-
ները:

Նոյնպէս չեն ընդունուիր նաեւ մէկ
մարդու ձեռք մէկ տնդամէ աւելի եկած
նամակներ:

ՅԱՆԿ ԸՆՏՐԵՆԵԱՅ

Յարութիւն Ստանիսլան Մանիքիմով.
Գրիգոր Կարապետեան զեղաղ սրծ
Յովհաննէս Պէդրոսեան ետգրածի
Յովհաննէս Մաղլանեան ոսկերիչ
Բարթոլոմէ Գիւրքճիպետեան սարափ
Մկրտիչ Ուղղունեան
Պօղոս Դամակոսեան պէզաղ
Նիկիտայ Մէլքեան զրաղիր

Ի զխնայ Ընտ. ժողովոյ Նախագահ
Երեւն քհնջ Սերէնեան

40 մայիս 1874 յիշեալ

. . . Խմբագիր . . .

Ամեն տեսակ բարերարութիւն մե-
ծարանաց և շնորհակալութեան արժանի
են, բայց այն բարերարութիւններն կամ
լաւ և ոչ լաւ նիւթական ձեռնարկու-
թիւններն որ դատարարութեան հա-
մար ըլլան, որոնք ալ զոգն ըլլան և բարձ-
րերէն չընան, բայց և այնպէս յաւերժա-
կան յիշատակաց արժանի են, վասն զի
այս տեսակ բարերարութիւններն վաւեր
եւ մեծամեծ հոնձարներ կը ծնին և աշ-
խարհ կը զարգանալով կընեն:

Հայկանոյ վարժարանին խնամակալու-
թիւնն ի վարժաց անտի զգացած էր զաշ-
խարհի մը կարեւորութիւնն ալ, որ ըզգա-
ցուններն կրթելու և զանանք ներդաշ-
կութեան մէջ աշակելու մեծ դերն ունի,
բայց զպրօքսի միջակին նիւթական անձ-
կութիւնն այս իր իզնն պատկուելուն բը-
նաւ չէր ներէր, և այս պատճառաւ էր
միայն որ մինչ ցարդ զսրբոյ դաշնակ մը
չունէր: Ի վերայ այս ամենայնի խնամ-
մարտութիւնն չէր կրնար մինչև վերջն
անտարբեր կենալ և այս կարեւոր արշեա-
տէն զրկել աշակերտութեանն: Այս առ-
թիւ պատիւ համարեց իրեն Ղազարոս-
եան Մեծ. Պետրոս Կիլիկիոյն աղղափ-
րութեան գիմար, որուն առաւանձնու-
թեան վարձն ուրիշ պարագաներու մէջ
վարժարան վայելած էր:

Յիշեալ Մեծ. Կիլիկիոյն խնամակա-
լութեան այս առաջարկութիւնն անմի-
ջապէս ընդունելով՝ Հայկանոյ վարժա-
րանիս զաշխարհի մը նախընտր, այդ բարի
գիտաբարութիւնն արդէն ինչն ալ ի մը-
տի յղացած ըլլալն յայտնելով: Ուստի
խնամակալութիւնն իւր պարտականու-
թիւնը կատարելու համար՝ կը վերջաց
հրատարակաւ իւր շնորհակալութիւնն
յայտնելը իմաստեղով ի սրտէն նմանօրի-
նակ նախապաշտ անձանց թիւոյն բազ-
մութեան որոնցմէ միայն կախումն ունի
մեր սոյգին փառաւոր և երջանիկ ապա-
գայն:

Բարեկցայ եմք որ ներկայ ձեր պատ-
ւական լրագրոյն էջերուն մէջ հրատա-
րակելու շնորհն ընէք:

Ի Գիմար խնամակալութեան
Ստանիսլան
Բ. Յիշեալեան

Կ. Պօլիս 11 մայիս 1874

. . . Խմբագրապետ Տէր . . .

Կը խնդրեմ որ բարեհաճիք ծա-
նուցանել թէ Ասիա լրագիրը յառա-
ջիկայ շաբաթը թիւ օրէն (մայիս 15)
պիտի սկսի ամեն օր հրատարակել
մեծ գիրքով մը եւ պիտի վաճառուի
թիւրք 20 վրդի:

Մանրամիտեցիք՝ զորս երեւնի կը
հրատարակէինք, աւարտած ըլլալով,
Պէրնարտէն Տը Սէն—Բիէրը Հընրի-
կԱՍՏԱՆԻ ՏՆԱՄԻ անուն մէկ փոքրիկ
բայց գործիկ վկայաստանութիւնը չա-
րքաբար թիւ օրէն պիտի սկսինք հըրա-
տարակել լրագրոյ միջոցաւ եւ գըր-
քի ձեւով:

Այսու առթիւ կը փութամք նաեւ
մեր շնորհակալութիւնը յայտնելու
ընթերցատէր ժողովրդեան կողմէն
մեզ ցոյց տուած համակրութեան
համար, որով կը խրախուսուինք օր
ըստ օրէ աւելի օգտակար եւ յա-

ռաջգիմական գիրքի մը վերածելու
մեր լրագիրը:

Միամ. յարգանք
Դմր.—Տնօրէն Ասիա լրագրոյ
Մ. Պօլիս լրագրապետ

Ե.Օ.Դ

Մօլտօ—Վարդիկայ Հայաբնակ քա-
ղաքներուն մէկէն պանդուխտ՝ Հայ
քահանայ մը կու գալի, քիչ շատ ուսում
կրթութիւն և աղղափառական զգա-
ցաւ՝ ունեցող, որ կարող ըլլայ խա-
ղաղութեամբ և բար արժանայն հով-
ուել տեղւոյն վերելի հօտը, եւ մի-
անգամայն յանձն առնու նախակըր-
թական դաստառութիւն ընել 8 կամ
10 աղայոց:

Տեղւոյն Հոգաբարձութիւնը կը խոստ-
տանայ ամիսը հինգ Նարօյէն ոսկի եւ
ընտրութեան տուն, ամից զատ դուրս
սէն ալ ամիսն իրարու վրայ առնուազն
մէկ ու կէս Նարօյէն հասոյթ կրնայ
ունենալ քահանայն:

Այս պայմաններն յանձն առնող
եւ վերոյիշեալ հոնգամանքն ունեցող
քահանայն լրագրոյն խմբագիր—Տնօ-
րէնին հետ պէտք է տեսնուի:

ԵՐԻՈՒ ՎԻՃԱԿԱՅԻՆՈՒԹԻՒՆԵՐ

Ե.

Հանգուցեալ Սըրմանեան Յարու-
թիւն Եֆէնտիկ գրեանքը վիճակա-
հանութեան դրուած են, երկու հա-
րիւր բաժին վրայ, որոց ամենքն ալ
անպատճառ պիտի շահին: Այս զըր-
քերուն ամենքն ալ թանկագին եւ
միանգամայն հաղորդիւտ են:

Իւրաքանչիւր տոմարի գինն է
մէկ քառորդ արծաթ մեծիս, եւ կը
վաճառուի Պ. Յարութիւն Մարդարեան
նի զրաւագաւառաւոր, ի Մեծման,
Թըրքմար ճատեհալի 53. և Թատա-
րոն լրագրոյն գրասենեակը 6 Զէմ-
պէրի թաշ, Եմին պէյլին անին իմ-
զոյը թիւ 6:

Բ.

Հանգուցեալ Սըրմանեան Յարու-
թիւն Եֆէնտիկ գրեանքունը, մէկ
Պիւստի եւ եռասունի թաշիկը վիճա-
կահանութեան դրուած են հարիւր
բաժին վրայ, որոց երեքը միայն շա-
հօղ. Ա. շահօղ պիտի առնու գրքա-
տունը, Բ. Պիւստի եւ Գ. եռասունի
թաշիկը: Իւրաքանչիւր տոմարի գին
նըն է մէկ քառորդ մեծիս արծաթ,
եւ կը վաճառուի ինքնուրուշ տեղերը:
Վիճակահանութիւնը պիտի կատար-
ւի յառաջիկայ յունիս 2 ին կիրակի
օրը, եւ ժամն ու տեղը պիտի ծա-
նուցուին:

Ի Լ Ա Ն

Սիւս վէ պէյաշ Նէվ իճատ թի-
մուր թօքա տաէտ 231.000 ֆի պէ-
հէրի փորա 9:

Էճնտա թիմուր թօքա տաէտ 200

000: պէհէրի փորա 4:

Ասաքիլի Ծահանէ Սերմանեան
անպարճաւ լուրումի օրու պիւնաքա-
սայէ քօնըրն պալատէ միւրաքամ
իքի քալմ թիմուր թօքա ֆիլայթը
միւրէքքամէլէրի թալպի օճտէսին-
տէ օրու պիւնաքա լուրումին 14 ինճի
սալը կիւնի գարարը գալթիս իճնա
օլունաճաղընտան, իթա իթմէյէ թա-
լպ օլունաքըն եէվի մէղքիւրտէ
Տարի Ծուրայի ասքէրլէյէ կէլմէլէրի
1874 մայիս 8 Պաշը Սէրաքէրի

Ղալմթա Սարալը Գըշալյի հիւ-
մանունինտէ պալատան համամ քի-
րայէ վէրլէճէյինտէն, իսթիճարընա
թալպ օլունաքըն մայիսը լուրումին
օն տէօրտիւնճիւ սալը կիւնի Տարի
Ծուրայի ասքէրլէյէ կէլմէլէրի
1874 մայիս 1 Պաշը Սէրաքէրի

* Այսինքն առանց ընտանեաց:

